# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-26/54 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **26 մայիսի 2026թ.**

2026թ. մայիսի 25-ից 26-ը, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում տեղի ունեցավ լաբորատոր պարագաների և սարքերի ձեռքբերման թիվ ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-26/54 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Լ. Հարությունյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Կենսագիտության և ընդհանուր քիմիայի ամբիոնի վարիչ, |
| Մ. Ավանեսյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Կենսագիտության և ընդհանուր քիմիայի ամբիոնի մասնագետ, |
| Ա. Ադամյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Մորֆոլոգիայի և կենդանագիտության ամբիոնի մասնագետ, |
| Է. Զաքարյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոնի մասնագետ, |
| Ա. Հովհաննիսյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոնի մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Հարությունյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ս. Մելքոնյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր հինգ անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:

2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:

3. Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարությունների տեքստերը հաստատելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

4. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. մայիսի 25-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 15:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված հետևյալ տեղեկատվությունը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1-ող | Բժշկական մկրատ (միջին) | 9,000.00 |
| 2-ող | Բժշկական մկրատ (փոքր) | 9,000.00 |
| 3-ող | Լաբորատոր բռնակ | 25,000.00 |
| 4-ող | Հողի խոնավաչափ | 45,000.00 |
| 5-ող | Արեոմետր | 4,000.00 |
| 6-ող | Արեոմետր | 4,000.00 |
| 7-ող | Շտանգել ցիրկուլ | 12,000.00 |
| 8-ող | Բժշկական մկրատ | 3,600.00 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026թ. մայիսի 25-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ Ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՔՍՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2026թ. մայիսի 26-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

2. Հաստատել Ընթացակարգի արդյունքում հրապարակվող հայտարարությունների տեքստերը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Լ. Հարությունյան ______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Մ. Ավանեսյան ______________

Ա. Ադամյան ______________

Է. Զաքարյան ______________

Ա. Հովհաննիսյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ս. Մելքոնյան ______________